ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (2016-2020 թթ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ՆՊԱՏԱԿ 2. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ 3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 4. ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐ

ՆՊԱՏԱԿ 5. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՆՊԱՏԱԿ 6. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿ 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՀՊՄՀ-ն կրթական, գիտահետազոտական և մշակութային բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը նպատակաուղղված է կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների և արվեստի ոլորտներում ազգային և միջազգային փորձին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստմանը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծմանը և հմտությունների ձևավորմանը, պահպանմանը և հանրային ոլորտում մանկավարժական արժեքների տարածմանը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՀՊՄՀ –ն ձգտում է դառնալ հաստատություն, որը

–առաջարկում է կրթական նորագույն տեխնոլոգիաների, դասավանդման, ուսումնառության նորագույն մեթոդների, հետազոտության և նորարարության վրա հենված համակողմանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովող մրցունակ կրթական ծրագրեր՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին համահունչ, նոր սերնդի կրթության խնդիրներին ներկայացվող առանձնահատուկ կրթական մոտեցումներով,
–ունի անհրաժեշտ ուսումնական ենթակառուցվածքներ՝ նախակրթարան, հիմնական և ավագ դպրոցներ, ժամանակակից տեխնոլոգիաներ ու սարքավորումներ՝ բարձրորակ հիմնավոր կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար,
–ունի գործուն և արդյունավետ կառավարում ու վարչարարություն, որն ապահովում է կրթության որակի անընդհատ, շարունակական բարելավում և միջազգայնացում,
-ապահովում է մանկավարժական մասնագիտական բարձրորակ կրթություն և ունի անհրաժեշտ ներուժ հասարակության մանկավարժական գրագիտությունը և ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրները բարձրացնելու, տարածելու, քարոզելու համար,
–դաստիարակում է ազգային, բարոյական, հոգևոր և համամարդկային արժեքներ ունեցող ապագա մասնագետներ, հասանելի, մատչելի և նախընտրելի է հասարակության ամենատարբեր շերտերի ներկայացուցիչների համար,
–առաջատարն է ՀՀ-ում կրթական համակարգի նորագույն մտքի, կրթական հետազոտության և նորարության հարցերում, մատուցվող կրթական ծառայություններում,
-երաշխավորում է կրթության ոլորտի բարձրակարգ մասնագետների առկայությունը ոչ միայն հանրապետության ներսում, այլ նաև սփյուռքի կրթօջախներում, մատուցում նրանց մասնագիտական պատրաստման և վերապատրաստման բարձր մակարդակի կրթական ծառայություններ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆՔ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ	• *Համալսարանը կարևորում է փոխադարձ հարգանքի և փոխվստահության վրա հիմնված միջավայրի առկայությունը՝ համարելով այն կարևոր գործոն իր առաքելությունն իրականացնելիս:*
ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	• *Առաջնային է համարվում գործընկերային շահերի և որոշումների կոլեգիալ ընդունումը համալսարանի ռազմավարական նպատակներն իրականացնելիս, միաժամանակ պահպանվում են բազմակարծությունը և ժողովրդավարության սկզբունքները:*
ՈՒՍԱՆՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ	• *Համալսարանը առաջնային է համարում ուսանողի կրթական առաջընթացը, հետևաբար համալսարանի ջանքերը միտված են ուսանողների մտավոր ներուժը զարգացնելուն, մասնագիտական խորը գիտելիք-ներով բարձրորակ մասնագետներ և արժանա-պատիվ քաղաքացիներ դառնալուն:*
ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ	• *Համալսարանը կարևորում է ուսանողի և աշխատո-ղի ակադեմիական ազնվությունը և համալսարանի գործունեության թափանցիկության ապահովումը:*
ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	• *Համալսարանում կարևորվում է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացուն մատչելի և բարձրորակ կրթություն ստանալու հնարավորության ընձեռումը՝ առանցքա-յին համարելով բարձրակարգ գիտամանկավար-ժական կազմի ապահովումը:*
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ	• *Համալսարանը ձգտում է պահպանելու իր առաջ-նային դերը կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներում՝ համալսարանի հաջողության գրավականներից համարելով գիտական ներուժի նորարարական ակտիվությունը և ստեղծագործական նախաձեռնության առաջանցիկ զարգացումը:*

1 ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ՆՊԱՏԱԿ

Տրամադրել ուսանողի կրթական կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթական ծրագրեր՝ հագեցված արդիական մեթոդաբանությամբ և տեխնոլոգիաներով:

Խնդիր 1.1

Իրականացնել ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին և աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի վերափոխումներ:

Անհրաժեշտ քայլեր

1. *Վերանայել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթղթերը:*
2. *Իրականացնել մագիստրոսական և բակալավրիական կրթական ծրագրերի կարիքների վերլուծություն և բացահայտում:*
3. *Վերամշակել կրթական ծրագրերը ազգային և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք), ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխան:*
4. *Ապահովել դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկումը կրթական ծրագրերում:*
5. *Վերանայել սովորողների ընթացիկ և ամփոփիչ վերապատրաստման գործընթացները կրթական ծրագրերում ՝ առավել շեշտադրելով գործնական կարողությունների գնահատման անհրաժեշտությունը:*
6. *Ընդլայնել շահակիցների ներգրավվածությունը կրթական ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներում:*
7. *Մշակել նախապատրաստական, շարունակական և լրացուցիչ կրթության կազմակերպման, դրանց որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:*
8. *Նախապատրաստական, շարունակական և լրացուցիչ բարձրորակ կրթության կազմակերպում:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *ՀՊՄՀ ԳԽ-ի կողմից հաստատված 4 նորմատիվ փաստաթղթեր շահակիցների բավարարվածության բարձր ցուցանիշ և ռիսկայնության ցածր ցուցանիշ :*
- *Դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշներ:*
- *Նախապատրաստական, շարունակական և լրացուցիչ կրթության կազմակերպման քաղաքականություն ու ընթացակարգեր:*

Խնդիր 1.2.

Ապահովել ուսումնական գործընթացի, հետազոտական և ստեղծագործական գործունեության միասնականությունը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Բարելավել սովորողների հետազոտական աշխատանքների ղեկավարման մեխանիզմները կրթական ծրագրերի և ենթակառուցվածքային մակարդակներում՝ ապահովելով հետազոտական գործունեության պայմաններ:*
2. *Ստեղծել հետազոտական գործունեության որակի ապահովման համակարգ՝ ներառելով անձնային և մասնագիտական առաջընթացի ապահովման և գնահատման կառուցակարգեր:*
3. *Բարելավել և գործարկել ակադեմիական ազնվության խրախուսման և գրագողության կանխարգելման ընթացակարգերը:*
4. *Ներդնել քննողական մտածողության ու թիմային հետազոտական աշխատանքների կարողությունների զարգացման դասընթացներ կրթական ծրագրերում:*
5. *Բարելավել կրթական ծրագրերում հետազոտական գործունեության իրականացման, գնահատման և արդյունքների վավերացման համակարգերը:*
6. *Վերանայել սովորողների գրավոր և ինքնուրույն աշխատանքների ստուգման և գնահատման ձևերը՝ ընդլայնելով ստեղծագործական-հետազոտական աշխատանքների ծավալը:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Ակադեմիական ազնվության խրախուսման և գրագողության կանխարգելման ներբուհական գործուն համակարգ:*
- *Կրթական ծրագրերում հետազոտական գործունեության իրականացման, գնահատման և արդյունքների վավերացման համակարգեր:*
- *Հետազոտական և ուսումնական ինտեգրված բաղադրիչներով նորարարական կրթական միջավայր:*

Խնդիր 1.3

Մասնագիտական զարգացման դպրոցների հիմնադրում և պրակտիկայի, կարիերայի և ուսումնառության կողմնորոշման ու որակի ապահովման միասնական կառուցակարգերի ներդրում:

Անհրաժեշտ քայլեր

1. *Պրակտիկայի, կարիերայի և ուսումնառության կողմնորոշման գործընթացների կառավարման կառուցակարգերի բարելավում:*
2. *Մասնագիտական զարգացման դպրոցների ընտրություն և համագործակցության երկարատև ծրագրերի մշակում և իրագործում:*
3. *Ուսանողների ուսումնառության կողմնորոշման ուղղությամբ խորհրդատուների ինստիտուտի ստեղծում և գործարկում:*
4. *Համալսարան-գործատու համագործակցության որակի փոխադարձ գնահատման համակարգերի ներդրում:*
5. *Մասնագիտական զարգացման դպրոցների հետ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում:*
6. *Ուսանողների էլեկտրոնային թղթապանակի /պորտֆոլիո/ տեխնոլոգիայի մշակում և ներդրում պրակտիկայի և մասնագիտական առաջընթացի մշտադիտարկման համար:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Պրակտիկայի, կարիերայի և ուսումնառության կողմնորոշման գործընթացների կառավարման բարելավված կառուցակարգեր:*
- *Խորհրդատուների՝ ստեղծված և փորձարկված ինստիտուտ:*
- *Մասնագիտական զարգացման ընտրված դպրոցներ, համագործակցության մշակված երկարատև ծրագրեր, էլեկտրոնային միասնական հարթակ:*
- *Ուսանողական էլեկտրոնային մշակված թղթապանակ /վեբ-պորտֆոլիո/:*

Խնդիր 1.4

Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների և գործընթացների արդյունավետությունը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել համալսարանի գործունեության հիմնական ոլորտների, կրթական ստորաբաժանումների և միավորների ինքնագնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և Մասնա գիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի որդեգրած հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները:*
2. *Բարելավել ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային, ռեսուրսային ապահովվածության գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, մշտադիտարկման գործող ներքին չափանիշները և ընթացակարգերը:*
3. *Իրականացնել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկում մասնագիտական կրթական ծրագրերի պարբերական վերանայման համար:*
4. *Նախաձեռնել և իրականացնել համալսարանի կրթական գործունեության*

ինքնագնահատման գործընթաց համալսարանի կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների պարբերական մշակման համար:

5. *Նախապատրաստել համալսարանը մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին, իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման փուլային գործընթացները:*
6. *Գործադրել ՀՊՄՀ ֆակուլտետի, ամբի ոնի, դասախոսական կազմի գործու նեության, բազմագործոն գնահատ ման վարկանիշավորումը*
7. *Կատարելագործել կրթական գործունեության որակի ապահովման և մշտադիտարկման համակարգերը:*
8. *Բարելավել ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման չափանիշները, բողոքարկման համակարգերը, ապահովել դրանց առավել հրապարակայնությունն ու հետևողական կիրառումը, թափանցիկությունը:*
9. *Ստեղծել և ապահովել համակարգեր և չափորոշիչներ դասախոսական կազմի մանկավարժական գործունեության, մասնագիտական կարողու-թյունների և մանկավարժական հմտությունների գնահատման համար:*
10. *Մշակել կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի արդյունավետ և որակյալ կառավարման համար պահանջվող ներքին տեղեկատվության փաթեթներ:*
11. *Պատրաստվել համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրման հերթական փուլին, ապահովել որակի ներքին գնահատման չափորոշիչների և ինքնագնահատման գործընթացի ու համապատասխան զեկույցի թափանցիկությունը և հրապարակայնությունը, հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում և դրանց մասնակից դարձնել համալսարանի ներքին և արտաքին շահակիցներին:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *ՈՒսուցման որակի՝ եվրոպական արժևորման չափանիշների պահանջներին համահունչ գնահատման և ապահովման գործող ներքին համակարգ:*
- *Բակալավրի և մագիստրոսի՝ իրականացվող կրթական ծրագրերի վերլուծության և որակի ամենամյա գնահատման պրակտիկայի արմատավորում, ուսումնական ստորաբաժանումների գործունեության ու կրթական ծրագրերի ինքնավերլուծություն՝ ըստ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների կրթական ծրագրերի (մասնագիտությունների) պետական հավատարմագրման գործընթացի:*

Ներդնել նորարարական կրթական գործընթաց՝ ապահովելով բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի պատրաստում առցանց, էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայնակի կիրառման հիման վրա, կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:

Անհրաժեշտ քայլեր

1. *Ստեղծել նորարարական կրթական միջավայր ուսանողների և դասախոսների շրջանում կրթական էլեկտրոնային հարթակի և համացանցի սոցիալական ռեսուրսների, սոցիալական մեդիայի միասնականացման միջոցով:*
2. *Զարգացնել կրթական գործընթացների սուբյեկտների ուսումնական համագործակցության տեխնոլոգիաները համաչափ բաշխված, ճկուն և բաց տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի ստեղծման միջոցով:*
3. *Մշակել և ներդնել էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ինտերակտիվ դասընթացներին ներկայացվող պահանջներն ապահովող չափանիշներ և չափորոշիչներ:*
4. *Մշակել ժամանակակից պահանջներին համապատասխանող էլեկտրոնային սեփական կրթական ռեսուրսներ:*
5. *Ներդնել ուսուցման որակի բարձրացումը խթանող էլեկտրոնային նորարարական տեխնոլոգիաներ:*
6. *Ստեղծել կրթական անհատական մոտեցումների իրականացման հնարավորություն էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթի և հարթակի միջոցով:*
7. *Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և դասավանդման, ուսանողներին՝ կիրառման և ուսումնառության համար:*
8. *Ներդնել ուսանողների կրթական առաջխաղացման մշտադիտարկման համակարգ առցանց կրթական հարթակի հիման վրա:*
9. *Մշակել դասախոսների և ուսանողների գործունեության մշտադիտարկման ընթացակարգեր էլեկտրոնային առցանց ուսուցման և հեռավար կրթական տեխնոլոգիաների կիրառման պայմաններում:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Ժամանակակից տեխնոլոգիաներով ապահովված կրթական գործունեություն:*
- *Ներդրված առցանց ուսուցման բազմագործառույթ էլեկտրոնային համակարգ:*
- *Էլեկտրոնային ուսուցման ժամանակակից պահանջներին համապատասխան ինտերակտիվ դասընթացներ:*
- *Կրթական ծրագրերի՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովվածության աճ:*
- *Առցանց ուսուցման տեխնոլոգիաները կիրառող դասախոսների թիվ :*
- *Դասախոս - ուսանող գործունեության էլեկտրոնային ուսուցման լայն կիրառում:*

2 ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ

Զարգացնել համալսարանի գիտահետազոտական գործունեությունը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, աստիճանաբար անցում կատարել համալսարանի հետազոտական կարգավիճակին:

Խնդիր 2.1.

Նպաստել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Ստեղծել համալսարանի առաքելությունից բխող գիտական դպրոցներ (որոշակի գիտական թեմաներ զարգացնող գիտական ներուժ):*
2. *Ընտրել արդիական և կարևորագույն արդյունքների առևտրայնացման գործընթացին նպաստող հետազոտական թեմաներ :*
3. *Բարձրացնել մագիստրոսական, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների որակը, ստացված արդյունքները ներդնել գործնական շրջանառության մեջ:*
4. *Նպաստել միջազգային և հանրապետական գիտական ծրագրերի մրցույթներին դասախոս գիտնականների մասնակցության աճին:*
5. *Բարձրացնել համալսարանի գիտական ներուժը՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից՝ գիտական հետա-զոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով:*
6. *Ապահովել գիտնականի զարգացման և կատարելագործման շարունակականությունը:*
7. *Ստեղծել մրցունակ, սարքավորումներով հագեցած գիտական ինստի-տուտներ, կենտրոններ և լաբորատորիաներ:*
8. *Ապահովել գիտական աշխատողների երկկողմանի ակտիվ գործու-նեություն:*
9. *Նպաստել համալսարանի գիտական դպրոցների կողմից ստացված արդյունքների հիման վրա միջազգային և հանրապետական գիտա-ժողովների կազմակերպմանը:*
10. *Ստեղծել և խրախուսել համապատասխան գիտական հարթակ-շտեմարաններին ինտեգրված կառույցներ:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Գիտական դպրոցների առկայություն:*
- *Հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքների ներդրման գործող համակարգ:*
- *Արդիականացված և առևտրայնացմանը միտված գիտահետազոտական թեմատիկա:*
- *Մագիստրոսական, թեկնածուական, դոկտորական որակյալ ատենախոսություններ:*
- *Արդիականացված նյութատեխնիկական բազա:*
- *Գիտահետազոտական արդյունավետ տեղեկատվական համակարգ:*
- *Մրցակցային հիմունքներով ֆինանսավորվող գիտական հիմնարար նախագծերի առկայություն:*
- *Համատեղ գիտական ինստիտուտներ, լաբորատորիաներ:*
- *Գիտական ներուժի բարձր պահանջվածություն:*
- *Միջազգային գիտական նախագծերում մասնագետների ընդգրկվածության աճ:*
- *Դասախոսական կազմի գիտական շարժունության աճ:*
- *Միջազգային և հանրապետական գիտական նստաշրջաններում մասնակցության աճ:*
- *Գիտությանը երիտասարդ գիտնականների անդամագրվածության թվի աճ:*

Խնդիր 2.2.

Նպաստել գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Նպաստել համալսարանի գիտնականների արժեքավոր և որակյալ աշխատությունների հրապարակմանը:*
2. *Նպաստել համալսարանի դասախոսների դասագրքաստեղծ գործունեության մասնակցությանը:*
3. *Նպաստել համալսարանի գիտնականների գիտական արդիական մենագրությունների հրապարակմանը:*
4. *Բարձրացնել համալսարանում հրատարակվող գիտական պարբերականների որակը:*
5. *Ստեղծել արտասահմանյան գիտական համապատասխան կենտրոնների հետ բարձր վարկանիշ ունեցող համատեղ պարբերականներ:*
6. *Ապահովել միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում համալսարանի դասախոսների գիտական նյութերի հրատարակումը:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականներում համալսարանի գիտնականների հրատարակումներ:*
- *Դպրոցների և բուհերի ուսումնական գործընթացում անհրաժեշտ դասագրքերի առկայություն:*
- *Արժեքավոր մենագրությունների հրատարակում:*
- *Բարձր վարկանիշ ունեցող սեփական և միջազգային պարբերականների համատեղ*

գործունեություն:

- *Հրատարակված գիտական նյութի ապրանքայնացում:*
- *Միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում գիտական հոդվածների աճ:*

Խնդիր 2.3.

Նպաստել համալսարանում գիտական կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Ապահովել համալսարանի գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման համակարգի նորացում:*
2. *Ստեղծել մշտադիտարկման մոդելներ գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ վերապատրաստման նպատկով:*
3. *Մշակել կարիքների հետազոտման համակարգեր գիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման նպատակով:*
4. *Նախագծել վերապատրաստման և որակավորումների բարձրացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր:*
5. *Ներդնել արտաքին գործընկերների հետ համատեղ վերապատրաստման և որակավորման բարձրացման մոդելներ:*
6. *Նպաստել արտասահմանյան կադրերի պատրաստմանը համալսարանի գիտական բազայի հիման վրա:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Գիտական կադրերի պատրաստման ծրագեր:*
- *Վերապատրաստման մշտադիտարկման մոդելներ:*
- *Վերապատրաստման և որակավորման բարձրացման կարիքների հետազոտման մեխանիզմներ:*
- *Վերապատրաստման ծրագրեր:*
- *Համատեղ վերապատրաստման մոդելներ:*
- *Արտասահմանյան գիտական աշխատողների պատրաստման ծրագրեր:*

Խնդիր 2.4.

Աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ կրթափորձի տարածմանը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել մտավոր սեփականության՝ որպես տնտեսական ռեսուրսի շրջանառության մոդելներ:*
2. *Ձևավորել մանկավարժության և հոգեբանության ոլորտներում գործնական միջոցառումների ձևաչափեր:*
3. *Մշակել համալսարանի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների փոխանցման համակարգեր:*
4. *Ստեղծել համալսարանի աշխատակիցների հեղինակային իրավունքների պաշտպանության, գիտական աշխատանքների իրավական պաշտպանվածության և նորմատիվ ակտերի ապահովման ձևաչափեր և պայմաններ:*
5. *Ապահովել համալսարանի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների ներդրման հաշվին ստացված արտաբյուջետային միջոցների աճ:*
6. *Նպաստել համալսարանի գիտակրթական գործունեության առաջմղմանը դեպի ապրանքայնացում:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Համալսարանի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների փոխանցումն ապահովող համակարգ և աշխատակիցների անհրաժեշտ քանակ :*
- *Համալսարանի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների փոխանցումն ապահովող քանակական աճ:*
- *Մտավոր գործունեության փոխանցումն իրականացնող գիտական և գործնական բնագավառներ:*
- *Արդյունքների փոխանցման և տարածման քանակական աճ:*
- *Փոխանցման արդյունքում համալսարանի կողմից ստացված լրացուցիչ ֆինանսական միջոցների աճ:*
- *Մտավոր գործունեության նորմատիվային դաշտի առկայություն:*

3 ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆՊԱՏԱԿ

Զարգացնել համալսարանի մարդկային ռեսուրսների համակազմը, ապահովել որակյալ դասախոսական ներուժ և բարեկեցության մակարդակ, ժամանակակից աշխատանքային միջավայր:

Խնդիր 3.1.

Շարունակել համալրել պրոֆեսորադասախոսական կազմը կրթական ծրագրերի որակի ապահովման արդի պահանջներին համահունչ:

Անհրաժեշտ քայլեր

1. *Իրականացնել պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատում՝ ըստ մատուցվող կրթական ծրագրերի որակի ապահովման պահանջների, մասնագիտական որակների և տարիքային կազմի:*
2. *Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիր՝*
   - *կատարելագործել դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշները և գործընթացները՝ սահմանելով դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ կրթական ծրագրի ելքային արդյունքների,*
   - *վերամշակել դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագիրը՝ ապահովելով մասնագիտական վերապատրաստման պարտադիր բաղադրիչը:*
3. *Կազմակերպել դասախոսների վերապատրաստում՝*
   - *տիրապետելու կրթական նոր տեխնոլոգիաներին, դասավանդման ինտերակտիվ մեթոդներին,*
   - *մշակելու և իրականացնելու էլեկտրոնային ուսուցման դասընթացներ,*
   - *իրականացնելու կրթական բարեփոխումներ և զարգացնելու որակի մշակույթ:*
4. *Ներդնել դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման և վարկանիշավորման ցուցանիշների գործուն համակարգ և ճշգրիտ գնահատման ընթացակարգ:*
5. *Քայլեր ձեռնարկվեր խոստումնալից կադրերի խրախուսման, աջակցման, պահպանման, նոր անհրաժեշտ կադրերի*

ներգրավման ուղղությամբ:

Զարգացնել համալսարանի մարդկային ներուժի կառավարման համակարգը, նպաստել վարչակազմի շարունակական համալրմանն ու որակական առաջ-ընթացին:

Անհրաժեշտ քայլեր

1. *Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարո-ղությունների զարգացման ծրագիր և մշակել հայեցակարգ:*
2. *Շարունակել ուսանողների, դասախոսների և աշխատողների թվաքանակների միջև արդյունավետ հավասարակշռման գործընթացը՝ նպատակ ունենալով ապահովելու հստակ հիմնավորված, որակը չխաթարող, հաստիքախնայողական քաղաքականություն:*
3. *Սահմանել չափորոշիչներ ՀՊՄՀ վարչակազմի և այլ աշխատողների հաստիքների պլանավորման և վերջիններիս ներկայացվող որա-կական պահանջների ձևավորման համար:*
4. *Մշակել պաշտոնի անձնագրեր և աշխատանքի նկարագրեր վարչա-կան, ուսումնաօժանդակ, տեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար:*
5. *Կազմակերպել վարչակազմի կատարելագործման գործընթաց՝ կառավարման նոր մեթոդների, բուհական կրթության բարեփո-խումների, տեղեկատվական կառավարման համակարգերի յուրացման և ներդրման ուղղությամբ:*
6. *Ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, տեխնիկական տարա-կարգերի աշխատողների որակավորման համակարգ:*
7. *Խրախուսել դասախոսական կազմի մասնակցությունը համալսարանի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:*
8. *Իրականացնել վարչակազմի փուլային երիտասարդացման քաղա-քականություն, ստեղծել կայուն ռեզերվ և մրցակցային միջավայր՝ կառավարման կառույցների և ստորաբաժանումների ղեկավար կազմի որակյալ համալրումն ապահովելու նպատակով:*
9. *Նպաստել համալսարանի շահերի և միասնական պատասխանա-տվության, համալսարանական համայնքին պատկանելու գիտակց-մանը, ՀՊՄՀ-ի լավագույն ավանդույթների պահպանմանն ու դրանց շարունակականության ապահովմանը:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Դասախոսական կազմի գնահատման վարկանիշային համակարգի առկայություն:*
- *Դասախոսական կազմի տարակարգերի համար աշխատավարձերի տարբերակված սանդղակներ:*
- *Դասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում 2020 թվին 2015-ի համեմատ առնվազն 15%-ով:*
- *Ուսանող-դասախոս քանակական հարաբերակցությունը՝ 12:1:*
- *Ուսանող-աշխատող քանակական հարաբերակցությունը՝ առնվազն 6:1:*
- *Որակավորման բարձրացում անցած և վերապատրաստված շուրջ / 500 / դասախոս:*
- *Մարդկային ներուժի կառավարման հայեցակարգ և ստրորաբաժանում:*
- *Վարչական,ուսումնաօժանդակ,տեխնիկական և այլ տարակարգերի աշխատանքի պաշտոնի հաստատված շուրջ 500 անձնագիր:*

4 ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐ

ՆՊԱՏԱԿ

Կրթական գիտությունների ոլորտում ուսումնառողների մասնագիտական կողմնորոշում: Ապագա դիմորդների նախաբուհական աջակցման (ուղեկցման,ուղղորդման) համակարգի զարգացում: Ուսումնառողների ներգրավում և առաջընթացի ապահովում համալսարանական միջավայրում:

Խնդիր 4.1.

Համալսարանի՝ որպես սոցիալական կողմնորոշում ունեցող բուհի դրական վարկանիշի ստեղծում՝ ի նպաստ դիմորդների ներգրավման:

Անհրաժեշտ քայլեր

1. *Իրականացնել լրատվամիջոցների, մշակութային ու կրթական հաստատությունների հետ կրթական և մշակութային ուղղվածությամբ համատեղ նախագծեր:*
2. *Ստեղծել հեռահար ուսուցման համակարգ և ավագ դպրոցականների հեռակա նախապատրաստական դասընթացներ:*
3. *Ապահովել նախապատրաստական դասընթացների հասանելիությունը համալսարանի կայքի, ռադիո Ֆամայի, ինտերնետային հեռուստատեսության միջոցով:*
4. *Ուղարկել նամակ - հրավերներ Երևանի ու հանրապետության մարզերի ավագ դպրոցների աշակերտներին՝ կողմնորոշվելու մասնագիտության ընտրության մեջ և մասնակցելու համալսարանի միջոցառումներին:*
5. *Բարձրացնել համալսարանական համայնքի դրական վարկանիշը և նպաստել գիտելիքի մասսայականացմանը, կազմակերպել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական,գիտական,մշակութային ձեռքբերումների շնորհանդես:*
6. *Հարստացնել համալսարանի հիմքի վրա ստեղծվող կրթական որակյալ ծրագրերի բազան (լրացուցիչ, շարունակական կրթական ծրագրեր, մանկական կենտրոններ, դպրոցական բանավեճ ակումբներ և այլն), ապահովել համալսարանի ուսանողների ներգրավվածությունը վերոնշյալ կրթական ծրագրերի իրականացման գործում:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Համալսարանի՝ որպես սոցիալական կողմորոշվածություն ունեցող բուհի ձևավորված ընկալում:*
- *Կրթական մասնագիտությունների և գիտելիքի մասսայականացման համար ստեղծված*

պայմաններ, ներգրավված ավագ դպրոցականներ՝ ապագա դիմորդներ:

- *Համալսարանի կրթական ստորաբաժանումներին տրվող կողմնորոշման աշխատանքների լայն հնարավորություններ:*

Խնդիր 4.2.

Մշակել և կազմակերպել աշակերտների շրջանում ուսուցչի մասնագիտության գրավչության ամրապնդմանը, մանկավարժական կողմնորոշում ունեցող դիմորդների ներգրավմանը նպաստող միջոցառումներ:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել ու կազմակերպել դպրոցականների համար համալսարանի ֆակուլտետներում մասնագիտական գիտելիքի և հետազոտության խնդիրներով հետաքրքրվածության մակարդակի աճին նպաստող միջոցառումներ (առարկայական օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ և այլն):*
2. *Ներգրավել համալսարանի կազմում գործող հանրակրթական դպրոցներն ու Երևանի այլ դպրոցները մասնագիտական կողմնորոշմանն առնչվող համատեղ գործունեության մեջ և դրանց հիման վրա փորձարկել համալսարանի մասնագիտական կողմնորոշման փորձնական ծրագրերը:*
3. *Անցկացնել համալսարանի բաց դռների արտագնա օրեր կրթական հաստատություններում, ստեղծել դպրոցականների՝ որպես ապագա դիմորդների աջակցման պայմաններ (մրցանակների հանձնում, համալսարանի ֆակուլտետների անվանական կրթաթոշակների տրամադրում):*
4. *Ստեղծել ընդունելության հարցերին վերաբերող ֆակուլտետային տարբեր ձևաչափի խորհրդատվական ծառայություններ (ֆորումներ, հանդիպումներ):*
5. *Ստեղծել ապագա հավանական դիմորդների հետ սոցիալական ցանցերում համագործակցության համակարգ՝ թիրախային լսարանի շրջանակների լայնացման և նոր դիմորդների ներգրավման նպատակով:*
6. *Ստեղծել հեռավար մասնագիտական կողմնորոշման համակարգ Հայաստանում և ԱՊՀ երկրներում:*
7. *Անցկացնել տեսական և գործնական մանկավարժական արդիական խնդիրներին նվիրված հանդիպումներ, սեմինարներ, կոնֆերանսներ հանրապետության կրթական հաստատություններում:*
8. *Ստեղծել ծնողների, ուսուցիչների, ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչների ներգրավմամբ հեռուստատեսային հաղորդումների շարք՝ մանկավարժահոգեբանական բովանդակությամբ:*
9. *ՀՊՄՀ բակալավրերի և մագիստրոսների շրջանում*
    - *Ներդնել մասնագիտական կողմնորոշմանն առնչվող առաջադրանքներ բակալավրիատի ու մագիստրատուրայի մանկավարժական դասընթացներում և պրակտիկաների*

ծրագրերում:

- *Կարևորել ավարտական որակավորման աշխատանքների գիտական և գիտամեթոդական բաղադրիչները՝ ժամանակակից կրթական խնդիրների ու դրանց առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Ստեղծված են ավագ դպրոցականներին՝ որպես համալսարանի ապագա դիմորդների, աջակցելու (ուղղորդելու) մեթոդները:*
- *Ներգրավված են համալսարանում բարձրագույն կրթություն ստանալու կողմնորոշում ունեցող դիմորդներ:*
- *Անցկացվում են երեխաների ու երիտասարդների համար միջոցառումներ, որոնք նպաստում են համալսարանի ֆակուլտետներում մանկավարժական խնդիրներով հետաքրքրվածության աճի ամրապնդմանը (առարկայական ծրագրեր, ինտելեկտուալ խաղեր, օլիմպիադաներ, մասնագիտական կողմնորոշման մրցույթներ):*
- *Իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանը նպաստող աշխատանքներ համալսարանի կայքում ու սոցցանցերում:*
- *Ներդրված են մասնագիտական կողմնորոշմանն առնչվող առաջադրանքներ բակալավրիատի ու մագիստրատուրայի մանկավարժական դասընթացներում:*

Խնդիր 4.3.

Հանրակրթական հաստատությունների՝ մանկավարժական կրթություն ստանալուն միտված շրջանավարտների նախաբուհական աջակցման (ուղեկցման,ուղղորդման) համակարգի տեղծում, նախաբուհական նախապատրաստման գործընթացում ընդգրկված մանկավարժներին մեթոդական օգնության ցուցաբերում:

Անհրաժեշտ քայլեր

1. *Բարձրացնել ընդունելության քննություններին ապագա դիմորդների պատրաստվածության աստիճանը բոլոր առարկաներից:*
2. *Համապատասխան պայմաններ ստեղծել դպրոցականների՝ հանրապետության մասշտաբով պետական կրթական չափանիշներով նախատեսված առարկաներից նոր գիտելիքներ ձեռք բերելու համար:*
3. *Կազմակերպել մանկավարժական միտում ունեցող դպրոցականների և դպրոցների շրջանավարտների նախաբուհական նախապատրաստություն:*
4. *Մշակել միջոցառումների շարք ապագա ուսանողներին բուհում ուսուցանելու պայմաններին իրազեկելու համար:*
5. *Ավելացնել հեռավար կրթական տեխնոլոգիաների և ուսումասիրվող օբյեկտների ինտերակտիվ համակարգչային մոդելների կիրառությունը ենթադրող առարկաների թիվը:*
6. *Մշակել և ստեղծել դպրոցականներին գրավող և օգտակար էլեկտրոնային կրթական բովանդակությամբ էլեկտրոնային ցանցային ակադեմիա:*
7. *Լայնացնել համալսարանական նորաստեղծ մասնագիտություններին համահունչ նախաբուհական նախապատրաստության կրթական ոլորտը:*
8. *Համալսարանի դասախոսների և համապատասխան կառույցների ուժերով*

կազմակերպել անվճար նախապատրաստական կուրսեր և մասնագիտական կողմնորոշման դասընթացներ դիմորդների համարէ դրանց ուկնդիրներին հետագայում հեռակա համակարգ մրցույթից դուրս ընդունելու հեռանկարով:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Ապագա դիմորդների բացահայտման և նրանց հետ աշխատանքի կազմակերպման ընտրված և փորձարկված նոր ձևեր:*
- *Տաղանդավոր երեխաների ընտրության և նրանց հետագա աջակցման (ուղեկցման, ուղղորդ-ման) համար ընտրված համակարգ:*
- *Էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, առարկաներ, հեռավար կրթական տեխնոլոգիաներ ենթադրող նախաբուհական նախապատրաստության ցանցային ակադեմիա:*
- *Դիմորդների ներգրավմամբ միջացառումների՝ օլիմպիադաների, ստեղծագործական մրցույթների անցկացում, բաց գրադարանների ստեղծում, ընդունելության քննություններին նախապատրաստման ծրագրերի ամենամյա իրականացման ընդլայնում:*

Խնդիր 4.4.

Մշակել միջոցառումների համակարգ, որը կնպաստի ուսումնառողների (բակալավր և մագիստրատուրա) շրջանում ուսանողական կազմակերպությունների դերի բարձրացմանը և ուսանողական ինքնավարության ընդլայնմանը՝ նպաստելով ուսանողակենտրոն համակարգի զարգացմանը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Նպաստել ուսանողական կազմակերպությունների հետազոտական գործու-նեությանը:*
2. *Տրամադրել ուսանողական կազմակերպություններում ընդգրկված ուսանողներին համապատասխան ռեսուրսներ տեղական և արտագնա կոնֆերանսներին մասնակցելու համար:*
3. *Մշակել ընգրկված ուսանողների գործունեության գնահատման արդյունավետ համակարգ:*
4. *Մշակել ուսանողական կազմակերպություններում ակտիվ և որակյալ գործու-նեություն ծավալող լավագույն ուսանողների խրախուսման կառուցակարգեր:*
5. *Նպաստել ուսանողական կազմակերպություններում ընդգրկված ուսանողների ստեղծագործական և միջանձնային շփման հմտությունների ձևավորմանը:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Դրամաշնորհային ծրագրերի առկայություն հետազոտության լավագույն առաջարկի իրա-կանացման համար:*
- *Մասնակցություն առնվազն 50 տեղական և 20 արտագնա կոնֆերանսներին*
- *Ուսանողների՝ ուսումնական կազմակերպություններում իրենց գործունեության գնահատման համակարգի առկայություն:*
- *Խրախուսման համակարգերի առկայություն:*
- *Ուսանողական կազմակերպությունների մասնակցությամբ միջազգային ծրագրերի թվի աճ:*

Խնդիր 4.5.

Բարձրացնել ՀՊՄՀ-ում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել գնահատման չափանիշներ համալսարանի կրթական և այլ ծառայությունների գործունեության վերաբերյալ կատարելով շրջանավարտների ամենամյա հարցումներ:*
2. *Պլանավորել, կանոնակարգել և իրականացնել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթաց՝ շրջանավարտների և հիմնական գործատուների հետ ստեղծելով հետադարձ կապի համակարգեր:*
3. *Զարգացնել կրթական ծրագրերի պահանջներին համարժեք և մատչելի ուսումնառության օժանդակության ռեսուրսներ՝ ապահովելով դրանց լիարժեք և արդյունավետ օգտագործումը:*
4. *Զարգացնել կրթական ծրագրերի պահանջներին համարժեք և մատչելի ուսումնառության օժանդակության ռեսուրսներ՝ ապահովելով դրանց լիարժեք և արդյունավետ օգտագործումը:*
5. *Զարգացնել ուսանողների տեղեկատվական-խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման, կրթական գործընթացում որակի բարձրացման օժանդակության ծառայություններ:*
6. *Ընդլայնել կարիքավոր ուսանողների պահանջների բավարարման շրջանակները:*
7. *Լրամշակել ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին քաղաքականությունը:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Գնահատման մշակված չափանիշներ համալսարանում ուսուցման, դասավանդման և կրթական միջավայրի վերաբերյալ:*
- *Կատարված հարցումների և ամենամյա հետազոտության արդյունքների առկայություն:*
- *Մշակված արդյունավետ համակարգեր՝ շրջանավարտների և գործատուների միջև հետադարձ կապի վերաբերյալ:*

Խնդիր 4.6

Համալսարանի կազմում գործող դպրոցների հիման վրա ստեղծել ժամանակակից ուսումնագիտական կենտրոն:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել ուսումնագիտական կենտրոնի կանոնակարգ;*
2. *Մշակել ուսումնագիտական կենտրոնի ռազմավարական ծրագիր;*
3. *Կազմել տեսանելի ապագայում անհրաժեշտ քայլերի կատարման ժամանակացույց:*
4. *Մշակել համակարգված միջոցներ և կառուցակարգեր՝*
    - *սովորողներին որակյալ միջնակարգ կրթության և մասնագիտական*

կողմնորոշման ապահովման համար;

- *ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների մասնագիտական զարգացման ուղղությամբ;*

5. *Իրականացնել քայլեր մանկավարժական գիտության զարգացման, տեսական դրույթների, հայեցակարգերի և պրակտիկայի համադրման, այլընտրանքային առարկայական ծրագրերի և դասագրքերի ստեղծման ուղղությամբ:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Գիտխորհրդի կողմից հաստատված կանոնակարգ;*
- *Գործողությունների կատարման ժամանակացույցի առկայություն*
- *Միջոցների և կառուցակարգերի կիրառման ընթացակարգ;*
- *Մանկավարժական առաջավոր փորձի ներդրումից շահակիցների շուրջ 80 % բավարարվածություն*

5 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՆՊԱՏԱԿ

Բարելավել համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը: Ապահովել համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Դառնալ նախաձեռնող համալսարանի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում: Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

Արդյունավետ կառավարում

Խնդիր5. 1.

Շարունակել ռազմավարական հեռանկարում կատարելագործել համալսարանի կազմակերպական կառուցվածքի զարգացումը և կառավարման արդյունավետության բարձրացումը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Բարձրացնել համալսարանի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը, շեշտադրել կառուցվածքային ստորաբաժանումների խոշորացումը և պատասխանատվության տեղափոխումը ստորաբաժանումների մակարդակ՝ բարձրացնելով դրանց գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը:*
2. *Ներմուծել համալսարանի գործունեության արդյունավետության գնահատման ցուցիչների համակարգ և այն ընդունել որպես հիմք համալսարանի ֆակուլտետների և ամբիոնների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվության համար:*
3. *Ստեղծել համալսարանի ներուժի նպատակային օգտագործմանը նպաստող պայմաններ առանցքային գործընթացների առանձնացման, դրանց արդյունավետության բարձրացման և համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացման միջոցով:*
4. *Ստեղծել համալսարանի կառավարման մարմինների որակավորման բարձրացման համակարգ:*
5. *Ապահովել համալսարանի ռազմավարական ծրագրի ուղենիշների տեղայնացումը նրա բոլոր ստորաբաժանումներում՝ մշակելով ռազմավարական ծրագրեր և գործողությունների պլաններ:*
6. *Ապահովել SS-ով հագեցած ժամանակակից ուսումնական և*

աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու և դյուրակառավարելի դարձնելու նպատակով:

Խնդիր 5.2.

Համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում կառավարման տեղեկատվական-վերլուծական միասնականացված համակարգի ստեղծման միջոցով:

Անհրաժեշտ քայլեր

1. *Ստեղծել տեղեկատվական-վերլուծական համակարգ՝ կառավարմանն առնչվող որոշումների արդյունավետության բարձրացման նպատակով:*
2. *Ստեղծել համալսարանի կառավարման միասնականացված տեղեկատվական համակարգ:*
3. *Զարգացնել համալսարանի տեղեկատվական համակարգերը, ընդլայնել կառավարման տեղեկատվական համակարգերի կիրառումը կառավարման բոլոր ոլորտներում, ապահովել համալսարանի գործունեության տարբեր ձևերի տեղեկատվական բազաների փոխազդեցությունն ու կապակցումը:*
4. *Ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ համալսարանի կառավարման ոլորտում:*
5. *Ապահովել համալսարանի կառավարման բոլոր մակարդակների իրավական-նորմատիվային բազայի (փաստաթղթային փաթեթներ) շարունակական զարգացումը օրենսդրական - կազմակերպական և ներքին կազմակերպական փոփոխություններին համահունչ:*

Խնդիր 5.3.

Որակի կառավարման համակարգի զարգացում և դրա արդյունավետության բարձրացում համաշխարհային չափանիշների /TQM/ հիման վրա:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել և ներդնել համալսարանում ընթացող թե՛ հիմնական, թե՛ օժանդակ գործընթացները ներառող որակի կառավարման համակարգ:*
2. *Ձևավորել ուսումնամեթոդական, գիտական-նորարարական, փաստաթղթաշրջանառության, ֆինանսական և մարդկային ներուժի որակի կառավարման ենթահամակարգերի ընթացակարգերը և քարտեզագրումը, իրականացնել այդ համակարգի արդյունավետ կիրառումը:*
3. *Համալսարանի աշխատակիցների կողմից որակի կառավարման ժամանակակից մեթոդների յուրացում :*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Կառավարման կազմակերպական արդյունավետ կառուցվածք, զարգացման հիմնական միտումներ:*

- *Համալսարանի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ:*
- *Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության և մշտադիտարկման համակարգ և ձևաչափ:*
- *Համալսարանի կառավարման մարմինների ճկունության բարձր աստիճան, կարգավորված հարաբերություններ:*
- *Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ:*
- *Կառավարչական որոշումների ընդունման օպերատիվություն ու արդյունավետություն:*
- *Համալսարանի կառավարման տեղեկատվական միասնականացված համակարգ, ֆինանսատնտեսական գործունեության տեղեկատվական համակարգ, կրթական-տեղեկատվական էլեկտրոնային միջավայր:*
- *Համալսարանի որակի կառավարման համակարգ:*
- *Կառավարման կանոնակարգված և քարտեզագրված հիմնական և օժանդակ գործընթացներ:*

Ֆինանսական կայունություն

Խնդիր 5.4.

Ներդաշնակեցնել և նպատակաուղղել համալսարանի ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված ֆինանսական պլանավորումը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել և ընդունել ՀՊՄՀ 2016-20 թթ. զարգացման ռազմավարական բյուջեի կողմնորոշիչ ֆինանսական ցուցանիշներ սույն ռազմավարական ծրագրում բերված նպատակների և խնդիրների իրականացման ռեսուրսային հենքի ապահովման նպատակով:*
2. *Կատարելագործել բյուջետային համակարգը՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխում և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցում առաջադրված նպատակներին հասնելու համար:*
3. *Սահմանել համալսարանի զարգացմանը, աշխատանքի վարձատրությանն ու ենթակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների ծավալների միջև տարեկան կողմնորոշիչ համամասնություններ:*
4. *Մշակել հաշվեկշռված բյուջետային ցուցանիշների համակարգ՝ ըստ գործունեության բնագավառների և զարգացման ուղղությունների:*
5. *Իրականացնել տարեկան բյուջեի պլանավորում հաշվեկշռված բյուջետային ցուցանիշների հիման վրա:*
6. *Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ շուկայական և տնտեսական տարաբնույթ ռիսկերի նկատմամբ համալսարանի ներուժի կայունության ապահովման նպատակով:*

Խնդիր 5.5.

Բազմազանեցնել համալսարանի ֆինանսական աղբյուրները և դրանց ընդլայնումը հաստատության զարգացման կարիքներին համապատասխան :

Անհրաժեշտ քայլեր

1. *Ակտիվացնել համալսարանի ծրագրերի, ծառայությունների մարքեթինգի և առևտրայնացման գործընթացների իրականացումը գործունեության*

հնարավոր բոլոր բնագավառներում:

2. *Ընդլայնել և բազմազանեցնել արտաբյուջետային միջոցների աղբյուրները՝ բարելավելով ֆինանսական աղբյուրների ռիսկերի կառավարումը:*
3. *Համալսարանի եկամուտների ընդհանուր ծավալում մեծացնել կրթական, գիտական ու տեղեկատվական վճարովի ծառայություններից գոյացած միջոցների հաշվեկշիռը դրանց ցանկի ընդլայնման և եկամտաբերության բարձրացման ճանապարհով:*
4. *Շարունակել աջակցել Հայաստանում ուսանողական վարկերի տրամադրման համակարգի կայացմանը՝ այդ ճանապարհով ստեղծելով դեպի համալսարան ուղղվող ֆինանսական ներհոսքի ընդլայնման կայուն նախադրյալներ:*

Խնդիր 5.6.

Ապահովել համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Կատարելագործել համալսարանի ֆինանսական կառավարումը՝ ֆինանսական գործունեության նորմատիվային բազայի հետագա զարգացման, կառավարման տեղեկատվական համակարգերի լայնածավալ ներդրման և կադրային կազմի պարբերական վերապատրաստման ու համալրման միջոցով:*
2. *Իրականացնել ընդգծված ռեսուրսախնայողական քաղաքականություն:*
3. *Մշակել և ներդնել վարձատրության՝ տվյալ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վերջնարդյունքում ունեցած կոլեկտիվ և անձնական ավանդի ցուցանիշների վրա հիմնված նոր համակարգ՝ կարևորելով նաև կատարված աշխատանքի որակական ցուցանիշները:*

Խնդիր 5.7.

Համալսարանի կրթական ծրագրերի՝ տեղական, տարածաշրջանային ու միջազգային շուկայում պահանջարկի ցուցանիշների աճին նպաստող կրթական ծառաությունների գնային քաղաքականության կատարելագործում:

Անհրաժեշտ քայլեր

1. *Ուսումնասիրել և վերլուծել համալսարանի կողմից մատուցվող կրթական ծառայությունների շուկան ՝ դրանց ցանկի և աշխարհագրության հնարավոր ընդլայնման նպատակով*
2. *Մշակել մատուցվող կրթական ծառայությունների գնագոյացման մեթոդիկա:*
3. *Ստեղծել պայմաններ համալսարանի կրթական ծառայությունների մարքեթինգային գնագոյացման մեխանիզմների համար:*
4. *Ստեղծել պայմաններ վարկային կազմակերպությունների հիման վրա կրթական ծառայությունների վարկավորման համակարգի զարգացման համար:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Կայունացման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում՝ առնվազն 0%:*
- *Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռ՝ առնվազն 0%:*
- *Ենթակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռ՝ առնվազն 0%:*
- *Աշխատակիցների՝ աշխատանքի վերջնարդյունքների վրա հիմնվող վարձատրության նոր համակարգ:*
- *Կրթական ծրագրերի գնագոյացման տնտեսապես հիմնավորված համակարգ:*

Որակյալ ենթակառուցվածքներ

Խնդիր 5.8.

Զարգացնել և արդիականացնել համալսարանի կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան անհրաժեշտ լսարանային ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազան:

Անհրաժեշտ քայլեր

1. *Վերազինել և արդիականացնել լսարանային և լաբորատոր բազան կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի նոր կարիքներին համապատասխան:*
2. *Ստեղծել նոր ուսումնագիտական լաբորատորիաներ կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան:*
3. *Ընդլայնել համագործակցությունը գործատու և բարեգործական նվիրատու կազմակերպությունների հետ լսարանների ու ուսումնագիտական լաբորատոր բազաների համատեղ վերազինման, նորացման և նորերի ստեղծման նպատակով:*
4. *Իրականացնել համալսարանի գրադարանի, ընթերցասրահների ու գրապահոցի արդիականացմանը, թվայնացմանը, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներով վերազինմանն ուղղված աշխատանքներ:*
5. *Ավելացնել և ընդլայնել համալսարնի լիարժեք տեխնոլոգիական կարողությամբ ապահովված՝ ինտերնետային կապով, համակարգչով, ցուցադրման թվային սարքով, ինտերակտիվ գրատախտակով և այլ անհրաժեշտ պարագաներով, լսարանների թիվը:*
6. *Ձեռնարկել համալսարանի հանրակացարանային բազայի վերականգման աշխատանքներ:*
7. *Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման, Ա. Բակունցի ուսումնարանի նախկին շենքի վերակառուցման աշխատանքներ՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ ապահովելով:*

Խնդիր 5.9.

Զարգացնել համալսարանի տեղեկատվական ներուժի համալրման գործընթացը, ապահովել դրանց մատչելիությունն ու արդյունավետ օգտագործումը կրթական և հետազոտական կարիքների զարգացմանը համահունչ:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել և իրականացնել համալսարանի տեղեկատվական ռեսուրսների զարգացման փուլային ծրագիր ուսումնական և գիտահետազոտական արդյունավետ գործունեության կարիքներին համահունչ:*
2. *Ապահովել արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար՝ ընդլայնելով համալսարանի մասնակցությունը գրադարանային գլոբալ ցանցերում և կոնսորցիումներում:*
3. *Ընդլայնել Համալսարանի ՏՏ ներուժի օգտագործման տեխնոլոգիական և տեխնիկական գործիքամիջոցների կազմը, ստեղծել համալսարանի էլեկտրոնային կրթական հարթակ՝ էլեկտրոնային հասցեներ հատկացնելով համալսարանի բոլոր ուսանողներին և դասախոսներին aspu.am դոմեյնում:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Վերազինված, նորացված, արդիականացված լսարանային և լաբորատոր բազա:*
- *Տեխնոլոգիական կարողությամբ և հեռաուսուցման առնվազն 100 լսարաններ:*
- *Վերականգնված հանրակացարանային բազա:*
- *Վերանորոգված և վերակառուցված ուսումնական մասնաշենքեր:*
- *Առցանց ուսուցման էլեկտրոնային պորտալ համակարգ՝ Վեբ հենքով:*
- *Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների հաշվեկշիռը՝ 100%:*
- *Էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում հիմնական դասախոսների կողմից՝ 100%:*
- *Տեղեկատվական ռեսուրսների՝ դեպի գրադարանային գլոբալ ցանցեր ելք ունեցող պորտալ:*
- *Համալսարանի բոլոր մասնաշենքերում գործող անլար ինտերնետային կապ:*
- *Յուրաքանչյուր ուսանողին բաժին ընկնող և ուսումնական նպատակներով օգտագործվող համակարգիչ:*

6 ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿ

Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով համալսարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

Խնդիր 6.1.

Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում համալսարանի առավելագույնս ներգրավումը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Ապահովել համալսարանի կայքէջի պարբերական զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները, համալսարանի օպերատիվ լրատվությունը և սեփական գովազդային նյութերի հրապարակումը:*
2. *Բազմազանեցնել համագործակցությունը ՀԼՄ-ների հետ, ստեղծել «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի անգլալեզու էլեկտրոնային հավելված:*
3. *Ստեղծել սեփական հեռուստատեսային և ռադիոհաղորդաշարեր, հսամալսարանի ինտերնետային հեռոստատեսություն, համագործակցել տարբեր հեռուստատեսային և ռադիոընկերությունների հետ:*
4. *Կատարելագործել համալսարանի ռադիո Ֆաման, բազմազանեցնել նրա ներքին կյանքին վերաբերող լրատվական տեղեկատվությունը, ստեղծել համալսարանը ներկայացնող հաղորդաշարեր, բարձրացնել դրանց տեխնիկական վիճակը և շահագործման արդյունավետությունը:*
5. *Ապահովել հանրային կապերի ոլորտում համալսարանի գործողությունների մշտադիտարկումը՝ PR գործունեությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու նպատակով:*
6. *Համակարգել և նպատակաուղղել համալսարանի դրական վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները:*
7. *Կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ համալսարանի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով:*
8. *Ներգրավվել հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային,միջազգային և համազգային ծրագրերում:*

9. *Համալսարանի պաշտոնական խորհրդանիշների կիրառման արարողակարգի մշակում:*

Խնդիր 6.2.

Բազմազանեցնել գործընկերային կապերը համալսարանի պատվիրատու կազմակերպությունների և հանրապետական հանրային կառույցների հետ:

Անհրաժեշտ քայլեր

1. *Իրականացնել աշխատաշուկայի առկա վիճակի ու զարգացման միտումների մոնիթորինգ և ձևավորել համալսարանի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազա:*
2. *Ներգրավել գործընկեր կազմակերպություններին համալսարանի և նրա առանձին ֆակուլտետների զարգացման ծրագրերի մշակման ու իրագործման աշխատանքներում:*
3. *Բարելավել համալսարան-գործատու փոխկապակցության համակարգը, իրականացնել մասնագետների և կրթական ծառայությունների շուկայական պահանջարկի կանխատեսումներ և ներքին ռեսուրսների մոնիթորինգ:*
4. *Կազմակերպել ‹‹աշխատանքի տոնավաճառներ›› և հիմնական գործատու կազմակերպությունների ու աշխատաշուկային առնչվող հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ համալսարանի ուսանողների պարբերական հանդիպումներ՝ նպաստելով համալսարանի շրջանավարտներին մասնագիտական աշխատանքով ապահովելու և գործընկերային նոր կապեր ձևավորելու գործընթացին:*
5. *Կազմակերպել հանդիպումներ մասնագիտական հաջողություններ արձանագրած շրջանավարտների և ուսանողների միջև:*

Խնդիր 6.3.

Զարգացնել համալսարանի հիմնական սոցիալական ծրագրերը, ապահովել սոցիալական ծառայությունների պահպանումն ու պայմանների բարելավումը:

Անհրաժեշտ քայլեր

1. *Մշակել և իրականացնել աշխատակիցների սոցիալական կարգավիճակի մակարդակի շարունակական բարելավման հնգամյա ծրագիր:*
2. *Ստեղծել հանրօգուտ նոր ծառայություններ՝ օգտագործելով շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացների կազմակերպման փորձը և խորհրդատվական տեղեկատվական ներուժը՝ դրանք հասանելի դարձնելու լայն հանրությանը:*

3. *Ապահովել համալսարանի հիմնական սոցիալական ծրագրերի համակողմանի զարգացումն ու մատչելիությունը համալսարանի բոլոր աշխատակիցների և ուսանողների համար (համալսարանական սննդի համալիր, հանգստի կազմակերպման բազաներ, մանկապարտեզ):Պարբերաբար անցկացնել սննդի կետերի սահմանած գների և սննդի որակի մոնիտորինգ:*
4. *Նպաստել համալսարանում մշակութային և մարզական ծրագրերի համակողմանի զարգացմանը, խթանել ուսանողների և աշխատողների ակտիվ մասնակցությունը համալսարանի մշակութային և մարզական կյանքին:*
5. *Բարելավել համալսարանի սննդի համալիրի կետերի սանիտարահիգիենիկ պայմանները, ապահովել դրանցում անհրաժեշտ տեսականու առկայությունն ու մատչելիությունը համալսարանի հանրության համար:*
6. *Աշխատակիցների սոցիալական կարգավիճակի բարելավում համալսարանի բյուջեում սոցիալական ծրագրերի և միջոցառումների հատկացումների հաշվեկշռի պարբերական ավելացման ճանապարհով:*
7. *Բարելավել էլեկտրաէներգիայի, ջրի և ջեռուցման մատակարարումները համալսարանի բոլոր մասնաշենքերում, ամենուր ապահովել կենսագործունեության անվտանգության և բնապահպանական չափորոշչային պահանջների իրականացումը:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի անգլալեզու էլեկտրոնային հավելված:*
- *Համալսարանի ինտերնետային հեռուստատեսություն:*
- *Համալսարանը ներկայացնող հաղորդաշարեր ռադիո Ֆամայում:*
- *Համալսարանի վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված միջոցառումների թվի աճ:*
- *Հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրություններ:*
- *Հանրության լայն շրջանակներին տրվող կրթական,հոգեբանական,մշակութային ծառայու-թյուններ:*
- *Կենսագործունեության անվտանգության և բնապահպանական պահանջների իրականացում:*

7 ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

ՆՊԱՏԱԿ

Ապահովել համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել ՀՊՄՀ գործունեության միջազգայնացումը:

Խնդիր 7.1.

Ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Անհրաժեշտ քայլեր

1. *Ընդլայնել ՀՊՄՀ միջազգային համագործակցության ուղղությունները համալսարանի զարգացման ծրագրին համահունչ:*
2. *Ընդլայնել ՀՊՄՀ համագործակցությունը ՄԱԿ-ի կառույցների հետ (UNESCO,UNICEF, UNECE, UNDP, GEF) "Վերափոխենք մեր աշխարհը մինչև 2030թ. կայուն զարգացման օրակարգ" համաշխարհային ծրագիրը, հատկապես կայուն զարգացման նպատակները, Հայաստանի Հանրապետությունում տեղայնացնելու և իրականացնելու ուղղությամբ:*
3. *Աջակցել համալսարանի բոլոր ֆակուլտետներին՝ ներգրավվելու միջազգային համագործակցության ծրագրերում:*
4. *Բարելավել համալսարանի միջազգային գործունեության տեղեկատվական համակարգը՝ մշտապես կազմակերպելով միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվություն:*
5. *Զարգացնել համագործակցությունը արտասահմանյան, այդ թվում նաև ԵԱՏՀ երկրների առաջատար բուհերի հետ՝ ապահովելով համատեղ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի ստեղծումն ու կրկնակի դիպլոմով կրթական ծրագրերի իրականացումը:*
6. *Խթանել համալսարանի ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, բարձրացնել ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը:*
7. *Նպաստել օտարերկրյա հրավիրված դասախոսների ՀՊՄՀ պարբերական այցելություններին և ընդլայնել ֆակուլտետների կրթական ծրագրերում նրանց մասնակցության շրջանակները:*
8. *Արտասահմանյան առաջատար բուհերի ու գիտակրթական կենտրոնների հետ ներգրավվել ռազմավարական միություններում և ցանցերում, կրթական և հետազոտական ծրագրերում, կնքել երկարաժամկետ համագործակցության*

պայմանագրեր, հիմնել լաբորատորիաներ ու կենտրոններ:

9. *Զարգացնել և ընդլայնել միջազգային ամառային դպրոցի աշխարհագրությունը՝ բազմազանեցնելով կրթամշակութային ծրագրերի բովանդակությունը:*
10. *Հետևել ուսանողական օժանդակ ծառայությունների մատուցման ասպարեզում միջազգային լավագույն փորձին:*
11. *Օժանդակել համալսարանի մասնակցությանը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին, ապահովել արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը համալսարանի ուսանողների և գիտամանկավարժական կազմի համար:*
12. *Նպաստել համալսարանի ուսանողական կազմակերպությունների արտաքին կապերի զարգացմանը և ներգրավմանը միջազգային կազմակերպություններում ու ծրագրերում:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *ՀՊՄՀ միջազգային համագործակցության նոր ուղղություններ:*
- *Այլ երկրների առաջատար բուհերի հետ մագիստրոսական և ասպիրանտական համատեղ ծրագրերի ստեղծում:*
- *Ներգնա և արտագնա շարժունության ծրագրերի մասնակցության թվի աճ, միջազգային փոխանակման ծրագրերի թվի աճ:*
- *Ֆակուլտետների կրթական ծրագրերում օտարերկրյա հրավիրված դասախոսների մասնակցության թվի աճ:*
- *Արտասահմանյան առաջատար բուհերի հետ երկարաժամկետ համագործակցության պայմանագրերի թվի աճ, համատեղ կրթական և հետազոտական ծրագրեր, լաբորատորիաներ ու կենտրոններ:*
- *Միջազգային ընդլայնված ամառային դպրոց, բազմազանեցված կրթամշակութային ծրագրեր:*
- *Արտաքին տեղեկատվական ներուժի մատչելիություն, անդամակցում միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին:*

Խնդիր 7.2.

Ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել համալսարանի ներգրավվմանը եվրոպական հետազոտական տարածքին:

Անհրաժեշտ քայլեր

1. *Խթանել համալսարանի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել համալսարանի ներգրավումը Եվրոպական հետազոտական տարածքին:*
2. *Շարունակել խթանել համալսարանի գիտական համագործակցությունը արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ, համատեղ նախագծերի նախաձեռնումը ու իրականացումը երկկողմ պայմանագրերի, կոնսորցիումների և միջազգային ցանցերի շրջանակներում:*
3. *Աջակցել համալսարանի մասնագետների մասնակցությանը ‹‹Էրազմուս պլյուս››,‹‹Հորիզոն›› միջազգային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը՝ կազմակերպելով տեղեկատվական սեմինարներ և վերապատրաստումներ:*
4. *Աջակցել համալսարանի գիտամանկավարժական կազմի և ասպիրանտների*

ընդգրկմանը տարբեր միջազգային գիտական նախագծերում. դրանց ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնման և հայտերի մշակման ուղղությամբ ցուցաբերել անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:

5. *Աջակցել դասախոսների գիտական ստաժավորմանը արտասահմանյան առաջատար գիտահետազոտական կազմակերպություններում և նրանց փորձի ակտիվ ներդրմանը համալսարանում:*
6. *Նպաստել արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքներին:*
7. *Աջակցել արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակմանը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովների մասնակցությանը:*

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Համալսարանի ներգրավում Եվրոպական հետազոտական տարածքին, միջազգային ծրագրերի թվի աճ:*
- *Գիտահետազոտական համատեղ նախագծերի թվի աճ երկկողմ պայմանագրերի, կոնսորցիումների և միջազգային ցանցերի շրջանակներում:*
- *Միջազգային հետազոտական ծրագրերում համալսարանի գիտամանկավարժական կազմի և ասպիրանտների ընդգրկվածության թվի աճ:*
- *Ֆակուլտետների կրթական ծրագրերում օտարերկրյա հրավիրված դասախոսների մասնակցության թվի աճ:*
- *Արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքների թվի աճ:*
- *Արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակման թվի աճ:*

Խնդիր 7.3.

Նպաստել օտարերկրյա ուսանողների համակազմի աճին ՀՊՄՀ-ում:

Անհրաժեշտ քայլեր

1. *Ընդլայնել ընդունելությանը մասնակցող հնարավոր երկրների ցանկը, օգնել ֆակուլտետներին ծավալելու դիմորդների հավաքագրման աշխատանքներ այլ երկրներում:*
2. *Համալսարանի կայքում ներկայացնել ՀՊՄՀ -ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, կրթական հաջողությունները, ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր:*
3. *Հետեղել գիտակրթական կազմակերպությունների մասին արտասահմանյան տեղեկատուներում ՀՊՄՀ կայքէջի հասցեն և համալսարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:*
4. *Ստեղծել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ՀՊՄՀ ուսանողական հանրությանը օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրման համար, բացահայտել և հաշվի առնել օտարերկրյա ուսանողների առաջնային խնդիրները՝ կացության ապահովումը, կողմնորոշումը և այլն:*
5. *Իրականացնել հայաշատ երկրներից սփյուռքահայ դիմորդների ներհոսքը խթանող և ակտիվացնող աշխատանքներ՝ այդ նպատակի համար*

օգտագործելով նաև ամառային դպրոցը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- *Դիմորդների հավաքագրման ուղղությամբ ծավալվող աշխատանքներ ԱՊՀ երկրներում:*
- *Օտարերկրյա ուսանողների ընդունելության ուղեցույց, կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր անգլերեն և ռուսերեն:*
- *ՀՊՄՀ -ում օտարերկրյա ուսանողներին վերաբերող պորտալ ՀՊՄՀ կայքէջում:*
- *ՀՊՄՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում արտասահմանյան կայքերում ՀՊՄՀ կայքէջի հասցեի զետեղմամբ:*
- *Սփյուռքահայ դիմորդների ներհոսքը խթանող քաղաքականություն և գործընթաց:*